ԱԿԱՆԱՏԵՍ
ԴԻՏՈՐԴԱԿԱՆ ԱՌԱՔԵԼՈՒԹՅՈՒՆ

ՏԵՂԵԿԱՆՔ

ՀՀ Ազգային ժողովի ընտրությունների մասին

դիտարկման ժամանակահատվածը՝

մայիսի 23-ից մինչև հունիսի 4, 2026 թ.

ՏԵՂԵԿԱՆՔ

ՀՀ Ազգային ժողովի ընտրությունների մասին
(դիտարկման ժամանակահատվածը՝ մայիսի 23-ից միչև հունիսի 4, 2026 թ.)

«Ականատես» դիտորդական առաքելությունը, ՀՀ Ազգային ժողովի 2026 թ. հունիսի 7-ին կայանալիք ընտրություններին ընդառաջ, իրականացնում է ընտրական գործընթացների դիտարկում՝ նախատեսելով վերահսկել ինչպես քվեարկության օրվա, այնպես էլ՝ ընտրություններին նախորդող, այդ թվում՝ քարոզչության ժամանակահատվածը և հետընտրական գործընթացները: Առաքելությունը սկսել է աշխատանքները ընտրությունների օրվա նշանակման պահից:

Սույն տեղեկանքը ներկայացնում է դիտարկման արդյունքները նախընտրական քարոզչության՝ մայիսի 23-ից միչև հունիսի 4-ն ընկած ժամանակահատվածի համար:

Դիտարկման մեթոդաբանություն

«Ականատեսը» կիրառում է համապարփակ և բազմաղբյուր մեթոդաբանություն, որի շրջանակներում իրականացնում է ինչպես գրասենյակային, այնպես էլ դաշտային հետազոտություններ՝ հավաքագրելով քանակական և որակական տվյալներ՝ առցանց բաց աղբյուրների, դաշտային անմիջական դիտարկումների, պաշտոնական հարցումների, կիսակառուցված հարցազրույցների և հանդիպումների, ինչպես նաև զանգվածային լրատվության միջոցների (ԶԼՄ) և սոցիալական մեդիայի ուսումնասիրությունների միջոցով: Ի լրումն, ընտրախախտումների վերաբերյալ քաղաքացիների ահազանգերն (այդ թվում՝ անանուն) արձանագրելու համար գործում է iditord.org հարթակը:

Նախընտրական քարոզչության ժամանակահատվածում դիտարկման շրջանակը ներառել է ընդհանուր քաղաքական իրավիճակը, սոցիալական ցանցերով ձևավորվող տեղեկատվական միջավայրը, իրավական շրջանակը, Կենտրոնական ընտրական հանձնաժողովի (ԿԸՀ) և ընտրատարածքային ընտրական հանձնաժողովների (ԸԸՀ) աշխատանքները, ընտրություններին մասնակցող քաղաքական ուժերի ընտրական ցուցակները, նրանց գրասենյակների գործունեությունը, քարոզարշավի ֆինանսավորումը, վարչական ռեսուրսի օգտագործումը, երրորդ անձանց կողմից իրականացվող քարոզչությունը, իրավասու պետական մարմինների կողմից իրավախախտումներին տրվող արձագանքը:

Տվյալների մի մասը հավաքագրվել է գրասենյակային ուսումնասիրությունների միջոցով՝ հիմք ընդունելով պաշտոնական աղբյուրների հրապարակային տվյալները, այդ թվում՝ ԿԸՀ, Կոռուպցիայի կանխարգելման հանձնաժողովի (ԿԿՀ), ՀՀ կառավարության, տեղական ինքնակառավարման մարմինների (ՏԻՄ) կայքերը և այլն:

Դաշտային դիտարկումները կատարվել են 61 երկարաժամկետ դիտորդի ներգրավմամբ, որոնք ապրիլի 1-ից ուսումնասիրել են գործընթացները Հայաստանի Հանրապետության 38 ընտրատարածքային ընտրական հանձնաժողովների սպասարկման տարածքներում: Երկարաժամկետ դիտորդները հանդիպումներ են ունեցել ընտրական գործընթացի հիմնական դերակատարների, ներառյալ ԸԸՀ-ների, քաղաքական ուժերի ներկայացուցիչների, տեղական ինքնակառավարման մարմինների, քաղաքացիական հասարակության կազմակերպությունների, լրատվամիջոցների և քաղաքացիների հետ: Ընտրական վարչարարության դիտարկման շրջանակներում դիտարկված ժամանակահատվածում նրանց կողմից կատարվել է 57 այց ԸԸՀ-ներ, դիտարկվել է տեղամասային ընտրական հանձնաժողովների (ՏԸՀ) անդամների մասնագիտական 65 դասընթաց: Դիտորդներն իրականացրել են 129 այց կուսակցությունների ու դաշինքների տարածքային գրասենյակներ և մասնակցել 259 տարբեր նախընտրական միջոցառումների, այդ թվում՝ հանրահավաքների, երթերի ու բակային հանդիպումների: ՏԻՄ-երի գործունեության ուսումնասիրության նպատակով տեղի է ունեցել 42 հանդիպում տեղական ինքնակառավարման մարմինների ներկայացուցիչների հետ: Հանրային տրամադրություններին ծանոթանալու նպատակով կայացել է 854 հարցազրույց համայնքների 920 քաղաքացու մասնակցությամբ: Բացի այդ, գործընթացի համապարփակ պատկերն ապահովելու համար իրականացվել է 48 հանդիպում այլ պետական մարմինների և կազմակերպությունների, այդ թվում՝ ՁԼՄ-ների, ինչպես նաև տեղական և միջազգային դիտորդական կազմակերպությունների ներկայացուցիչների հետ:

Վերհանված խնդիրների և փաստերի հավաստիությունն ապահովելու նպատակով կիրառվել է տվյալների ստուգում մի քանի անկախ աղբյուրների միջոցով: Արձանագրված էական խախտումների վերաբերյալ պատրաստվել և ներկայացվել են համապատասխան հաղորդումներ իրավասու իրավապահ մարմիններին ընտրական գործընթացների օրինականությունն ապահովելու նպատակով, ինչպես նաև ՀՀ վարչական դատարան են ներկայացվել հայցադիմումներ՝ համապատասխան անձանց վարչական պատասխանատվության ենթարկելու պահանջով:

<u>Դիտարկման արդյունքներ</u>

Ընտրական հանձնաժողովներ

Կենտրոնական ընտրական հանձնաժողով

2026 թ. մայիսի 23-ից միչև հունիսի 4-ն ընկած ժամանակահատվածում ԿԸՀ-ն գումարել է առանձին օրակարգերով 8 նիստ, որոնք ամբողջությամբ դիտարկվել են առցանց եղանակով (տեսաձայնագրությունները):

ԿԸՀ նիստերում քննարկվել է օրակարգերում ընդգրկված 10 հարց և ընդունվել է թվով 23 որոշում: Նիստերը, բացառությամբ դատախազության միջնորդությունների քննարկման վերաբերյալ նիստերի, հեռարձակվել են և տեսագրություններն առկա են ԿԸՀ կայքում: Դիտարկված նիստերով՝ քննարկված հարցերի վերաբերյալ որոշումներն ընդունվել են միաձայն: Ընդունված 23 որոշումներից 13-ը վերաբերել են ԱԺ ընտրությունների կազմակերպմանը, որից 5-ը՝ մեկ կուսակցության («Ալյանս» առաջադիմական ցենտրիստական կուսակցության) և 4 պատգամավորի թեկնածուի ինքնաբացարկների հիմքով գրանցումներն ուժը կորցրած ճանաչելուն, 1-ը պատգամավորի թեկնածուի գրանցումն անվավեր ճանաչելուն, 3 նորմատիվային բնույթի որոշումներ վերաբերել են քրեակատարողական հիմնարկներում քվեարկության սկիզբը ամրագրելուն, քվեաթերթիկների նմուշները և քվեաթերթիկի էլեկտրոնային տարբերակի նմուշը սահմանելուն, 2-ը վերաբերել են ԿԸՀ-ի կողմից ընտրական գրավների հատուկ հաշվեհամարում մնացած միջոցներից օգտագործելուն և այդ որոշման մեջ գումարի չափը փոխելուն, 2 որոշմամբ քննարկվել են հարուցված վարչական վարույթները:

ԿԸՀ 10 որոշումները կայացվել են դատախազության միջնորդությունների հիման վրա՝ պատգամավորների թեկնածուների նկատմամբ քրեական հետապնդում հարուցելու և ազատությունից զրկելուն համաձայնություն տալու առնչությամբ: Ի տարբերություն նախորդ ժամանակահատվածի նույնաբովանդակ որոշումների, ԿԸՀ-ն վերը նշված որոշումներում մի շարք դեպքերում հնարավորինս անդրադարձել է միջնորդություններում բերված հանգամանքներին և/կամ դրանց վերաբերյալ կողմերի դիրքորոշումներին և համապատասխան որոշումները պատճառաբանել է՝ արձանագրելով, որ *«…Սահմանադրության 48-րդ հոդվածով երաշխավորված՝ պասիվ ընտրական իրավունքի իրացմանը խոչընդոտելու նպատակ առկա չէ: Կենտրոնական ընտրական հանձնաժողովի գնահատմամբ՝ առկա չէ հանգամանք, որը հիմնավոր կփաստի քաղաքական դրդապատճառների առկայությունը:»:*

Պետք է կրկին նշել, որ ԿԸՀ օրակարգերը և որոշումները ԿԸՀ կայքում տեղադրվում են PDF ձևաչափով և ճնշող մեծամասնությունը մեքենայական ընթեռնելի չեն, ինչը դժվարացնում է այդ փաստաթղթերում առկա տվյալների հիման վրա իրականացվող աշխատանքը:

Վարչական վարույթներ

2026 թ. մայիսի 25-ին ԿԸՀ-ն քննարկել է «Ուժեղ Հայաստան» կուսակցությունների դաշինքի լիազոր ներկայացուցիչ Արամ Վարդևանյանի դիմում-հաղորդումը «Քաղաքացիական պայմանագիր» կուսակցության ընտրական ցուցակի պատգամավորի թեկնածու Նիկոլ Փաշինյանին հնարավոր պատասխանատվության ենթարկելու վերաբերյալ՝ քաղաքական տարբեր ուժերին վարկաբեկող, հանրային թշնամանք հրահրող և կուսակցության ղեկավար անձանց արժանապատվությունը նվաստացնող արտահայտությունների առնչությամբ: ԿԸՀ 210-Ա որոշմամբ տվյալ դիմումը մերժվել է:

ԿԸՀ-ն արձանագրել է, որ քարոզչության բովանդակության գնահատումն առանց օրենքով հստակ սահմանված չափորոշիչների կարող է հանգեցնել սուբյեկտիվ որակումների և գրաքննության վտանգի: Նա միաժամանակ ընդգծել է, որ թեև խոսքի ազատությունը բարձրագույն արժեք է, այն բացարձակ չէ, և քրեական պատասխանատվության հանգեցնող հնարավոր կոչերը պետք է գնահատվեն իրավապահ մարմինների կողմից: Հանձնաժողովն ընդգծել է, որ նախընտրական քարոզչությունը չպետք է ուղեկցվի ատելության կամ բռնության կոչերով և քաղաքական ուժերից ակնկալվում է առավելագույն զսպվածություն ու կոռեկտություն: Տվյալ դեպքում գնահատելով հնչեցված բառապաշարը՝ ԿԸՀ-ն գտել է, որ թեև այն դուրս է եկել քաղաքական կոռեկտության համատեքստից, այնուամենայնիվ չի ընկալվել որպես հարկադրանքի մեթոդ կամ բռնության կոչ, ինչի հիման վրա էլ եզրահանգել է, որ ներկայացված հանգամանքներում ՀՀ ընտրական օրենսգրքով սահմանված կարգի խախտում առկա չի եղել:

ԿԸՀ-ն մայիսի 29-ին և 30-ին քննարկել է «Լուսավոր Հայաստան» կուսակցության դիմումը «Անկախ դիտորդ» հասարակական դաշինքի անդամ «Իրազեկ քաղաքացիների միավորում» հասարակական կազմակերպության հավատարմագրումն ուժը կորցրած ճանաչելու վերաբերյալ: Քննարկման արդյունքում կայացված թիվ 219-Ա որոշմամբ ԿԸՀ-ն կարևորել և պարզաբանել է դիտորդական կազմակերպության հավատարմագրումն ուժը կորցրած ճանաչելու համար անհրաժեշտ պայմանները: Մասնավորապես, ԿԸՀ-ն կարևորել է դիտորդների և դիտորդական կազմակերպությունների քաղաքական չեզոքության ու անկողմնակալության պահպանումը՝ արձանագրելով, որ թեկնածուների կամ կուսակցությունների վերաբերյալ ցանկացած ձևաչափով անդրադարձը, որը կարող է կողմնակալության տարընկալման տեղիք տալ, պետք է բացառվի դիտորդի վարքագծում: Հանձնաժողովը սահմանել է պատասխանատվության այնպիսի չափորոշիչներ, ինչպիսիք են խախտման դիտավորությունը և պարբերականությունը: Միաժամանակ, ԿԸՀ-ն պարզաբանել է հավատարմագրման դադարեցման համար անհրաժեշտ բավարար շեմը, ըստ որի՝ առանձին դիտորդի կողմից եզակի «խնդրահարույց» հրապարակումը ինքնին բավարար չէ կազմակերպության հավատարմագրումն ուժը կորցրած ճանաչելու համար: Այդ ծայրահեղ միջոցը կիրառելի է միայն քաղաքական չեզոքության կոպիտ խախտումների, քարոզչության կազմակերպման կամ տարբեր դիտորդների կողմից իրականացված համատեղ խմբային խախտումների պարագայում:

2026թ. մայիսի 28-ի իր նիստով ԿԸՀ-ն մեկնարկել է նաև ՀՀ Ազգային ժողովի 2026 թվականի հունիսի 7-ի հերթական ընտրությունների էլեկտրոնային եղանակով քվեարկությունը:

Ընտրատարածքային ընտրական հանձնաժողովներ

2026 թվականի մայիսի 23-ից մինչև հունիսի 4-ը իրականացվել է ԸԸՀ-ների նիստերի օրակարգերի և որոշումների առցանց դիտարկում:

2026թ. մայիսի 25-ին թիվ 20 ԸԸՀ-ի կողմից և մայիսի 27-ին թիվ 10 և 37 ԸԸՀ-ների կողմից գումարվել են արտահերթ նիստեր՝ ընտրական տեղամասերի ցանկը հաստատելու և հերթական համարներ սահմանելու մասին որոշումների մեջ փոփոխություն կատարելու մասին օրակարգով: Նշված ԸԸՀ-ների որոշումներով համապատասխան ցանկերում կատարվել են փոփոխություններ ընտրական տեղամասերի հասցեների ճշգրտման, փոփոխման նպատակով:

Մայիսի 27-ին թիվ 37 ԸԸՀ-ն, մայիսի 29-ին՝ թիվ 23 և 30 ԸԸՀ-ները, իսկ մայիսի 31-ին՝ թիվ 19 և 25 ԸԸՀ-ներն իրենց որոշումներով փոփոխություններ և լրացումներ են կատարել «Տեղամասային ընտրական հանձնաժողովների կազմերը հաստատելու և տեղամասային ընտրական հանձնաժողովի նախագահ և քարտուղար նշանակելու մասին» որոշումներում՝ պայմանավորված տեղամասային հանձնաժողովների որոշ անդամների լիազորությունների վաղաժամկետ դադարեցմամբ: Նույն հիմքով՝ տեղամասային ընտրական հանձնաժողովների անդամների լիազորությունների վաղաժամկետ դադարեցման կապակցությամբ, հունիսի 2-ին համապատասխան որոշումներ են ընդունել թիվ 20, 27, 33 և 38 ԸԸՀ-ները, հունիսի 3-ին՝ թիվ 9, 13, 29 և 34 ԸԸՀ-ները, իսկ հունիսի 4-ին՝ թիվ 1, 2, 6, 14, 18, 21, 28 և 36 ԸԸՀ-ները՝ կատարելով համապատասխան փոփոխություններ և լրացումներ իրենց նախկին որոշումներում:

Հաշվետու ժամանակահատվածում առաքելության դիտորդների կողմից իրականացվել է, ընդհանուր առմամբ, 57 այց ԸԸՀ-ներ՝ դիտարկելու հերթական և արտահերթ նիստերը և ծանոթանալու ընտրությունների նախապատրաստական աշխատանքների ընթացքին: ԸԸՀ-ների աշխատանքները հաշվետու ժամանակահատվածում հիմնականում ընթացել են բնականոն հունով:

Տեղամասային ընտրական հանձնաժողովներ

Դիտարկվող ժամանակահատվածում «Ականատես» առաքելության կողմից դիտարկվել է ՏԸՀ անդամների մասնագիտական վերապատրաստման 65 դասընթաց: Այդ դասընթացներին, ընդհանուր առմամբ մասնակցել է հանձնաժողովների 1,142 անդամ: Դիտորդների գնահատմամբ՝ առավել տարածված խնդիրը շարունակել է մնալ հաճախելիության թերի ապահովումը. արձանագրվել է, որ մասնակիցներից առնվազն 68-ը ոչ լիարժեք են մասնակցել վերապատրաստմանը (դասընթացին միացել են էական ուշացումով կամ հեռացել են մինչև դրա ավարտը):

Դիտորդների կողմից դասընթացների ուսուցման որակը և կազմակերպվածությունը 1-ից 5 բալային սանդղակով գնահատվել են միջինից բարձր՝ հիմնականում ստանալով 4 կամ 5 գնահատական: Դասընթացները հիմնականում ծառայել են իրենց նպատակին և ապահովել մասնակիցների իրազեկումը, սակայն վերապատրաստման որակն ու լսարանի կառավարելիությունը տեղ-տեղ տարբերվել են՝ կախված դասընթացավարների պատրաստվածությունից և մասնակիցների կարգապահությունից:

Դասընթացների կազմակերպչական դրական ասպեկտներից առանձնացվել են դասընթացների ժամանակացույցի ճիշտ պլանավորումը, լսարանների մաքրությունն ու անխափան մեկնարկը, որոշ դեպքերում նաև մատչելիության ապահովումը (թեքահարթակների առկայությունը): Միևնույն ժամանակ, առանձին դասընթացներում արձանագրվել են լոգիստիկ և տեխնիկական որոշակի բացթողումներ.

- Լոռու մարզի Ալավերդի քաղաքում կայացած դասընթացներին բացակայել է պրոյեկտորը, ինչի արդյունքում առցանց և վիզուալ նյութերը մասնակիցներին ցուցադրվել են բջջային հեռախոսով՝ դժվարացնելով նյութի լիարժեք ընկալումը:
- Սյունիքի մարզի Սիսիան քաղաքում արձանագրվել են դասասենյակի ցուրտ լինելու և տեղաշարժի անհարմարությունների դեպքեր:
- Շիրակի մարզի Գյումրի քաղաքում արձանագրվել են նախատեսվածից ուշ մեկնարկի և մասնակիցների անվերահսկելի ելումուտի դեպքեր: Մասնակիցները լքել են լսարանը դասընթացի ընթացքում՝ առանց դասընթացավարների կողմից վերահսկողության:
- Երևանում արձանագրվել է դասընթացի մասնակցի կողմից անչափահաս երեխայի հետ դասընթացի ներկայանալու և դրա պատճառաբանությամբ վաղաժամ հեռանալու դեպք:

Ուսուցման բովանդակային որակը երբեմն տուժել է մասնակիցների ցածր կարգապահության և դասընթացավարների կողմից լսարանը կառավարելու դժվարությունների պատճառով:

- Երևանի որոշ դասընթացներ ուղեկցվել են լսարանային աղմուկով: Թեև նկատվել է մասնակիցների որոշակի ակտիվություն և հարցադրումների առատություն, սակայն հաճախ դա վերածվել է կողմնակի խոսակցությունների, տեղային աղմուկի և իրար չլսելու՝ խանգարելով ուսումնական պրոցեսը:
- Երևանում արձանագրվել են մասնակիցների կողմից դասընթացի տևողությունից բարձրաձայն դժգոհելու դեպքեր, ինչը երբեմն հանգեցրել է դասընթացավարների և մասնակիցների միջև վիճաբանության՝ խաթարելով ուսուցման կառուցողական միջավայրը:
- Առանձին դասընթացներ (օրինակ՝ Գյումրիում) կրել են թռուցիկ բնույթ. պակասել է համակարգված գիտելիքի փոխանցումը, իսկ պրոցեսը հաճախ սահմանափակվել է անհատական և մակերեսային քննարկումներով:

Նախընտրական քարոզարշավի ընթացքում նկատվել են ընտրական հանձնաժողովի անդամի կողմից քաղաքական չեզոքությանն ապահովմանն առնչվող որոշակի խնդիրներ:

- Մայիսի 29-ին «Ուժեղ Հայաստան» կուսակցության Աբովյան քաղաքում կազմակերպած հանրահավաքին մասնակցել է 29/15 ՏԸՀ նախագահ Տաթևիկ Բարդուղիմոսյանը, որն իր ուսերին գցել էր կուսակցության խորհրդանիշերով վերնաշապիկ: Նաև արձանագրվել է, որ նա ներգրավված է եղել կազմակերպչական աշխատանքներին:

- 29/12 ՏԸՀ անդամ Տաթևիկ Վարդանյանը, որը հանդիսանում է «Քաղաքացիական պայմանագիր» կուսակցության Աբովյան տարածքային կազմակերպության օպերատոր, մայիսի 13-ից ստանձնելով ՏԸՀ անդամի լիազորությունները, ակտիվորեն մասնակցել է «Քաղաքացիական պայմանագիր» կուսակցության քարոզարշավին, բակային այցերին և տեսանյութերով կիսվել իր ֆեյսբուքյան էջում:

- 37/25 ՏԸՀ նախագահ Սուսաննա Մարտիրոսյանն ակտիվորեն ներգրավվել է «Քաղաքացիական պայմանագիր» կուսակցության քարոզչությանը՝ մասնակցելով նախընտրական միջոցառումներին և իր ֆեյսբուքյան էջում պարբերաբար կիսվելով կուսակցության քարոզարշավը լուսաբանող հրապարակումներով:

- ՁԼՄ կողմից արձանագրվել է նաև ՏԸՀ անդամներ Շուշանիկ Առաքելյանի (թիվ 8/4 ՏԸՀ), Խաչիկ Դավթյանի (թիվ 8/9 ՏԸՀ), Շեքսպիր Հակոբյանի (թիվ 8/12 ՏԸՀ), Լյուդվիգ Առաքելյանի (թիվ 8/20 ՏԸՀ), Ալիսա Սարգսյանի (թիվ 8/22 ՏԸՀ), Նունե Զոհրաբյանի (թիվ 8/25 ՏԸՀ), Գայանե Թադևոսյանի (թիվ 8/39 ՏԸՀ), Արմինե Ֆանդունցի (թիվ 8/43 ՏԸՀ), Արմեն Հունանյանի (թիվ 8/44 ՏԸՀ), Անուշավան Ասատրյանի (թիվ 8/45 ՏԸՀ), Սեդա Կարապետյանի (թիվ 8/50 ՏԸՀ), Արմենուհի Արզումանյանի (թիվ 8/53 ՏԸՀ), Դավիթ Դավթյանի (թիվ 8/58 ՏԸՀ), Շուշանիկ Հարությունյանի (թիվ 8/59 ՏԸՀ) և Փառանձեմ Կոստանյանի (թիվ 8/62 ՏԸՀ) մասնակցությունը «Քաղաքացիական պայմանագիր» կուսակցության նախընտրական քարոզարշավին Երևան քաղաքում: Լրատվամիջոցն իր հրապարակման մեջ նույնականացրել է այդ անձանց՝ հրապարակելով նրանց անուն-ազգանունները, ԿԸՀ կողմից տրամադրված որակավորման վկայականների (լիցենզիաների) համարները, ինչպես նաև վերջիններիս կողմից քարոզչություն իրականացնելու փաստը հիմնավորող լուսանկարներ:

Կուսակցություններ

Նախընտրական ծրագրեր

Ընտրությունների նախօրեի դրությամբ ԿԸՀ կայքում առկա չեն եղել հետևյալ 7 կուսակցությունների նախընտրական ծրագրերը՝

- «Բոլորին դեմ եմ» ժողովրդավարական կուսակցությունը
- Հայաստանի շնորհապետական կուսակցությունը
- «Նոր ուժ» ռեֆորմիստական կուսակցությունը
- «Քոչարի ազգային վերածնունդ և ազգի զարթոնք» կուսակցությունը
- Քրիստոնեա-ժողովրդավարական կուսակցությունը
- «Հայաստան» կուսակցությունների դաշինքը
- «Լուսավոր Հայաստան» կուսակցությունը

Միևնույն ժամանակ, պետք է նկատել, որ վերը նշված կուսակցություններից չորսը՝ «Բոլորին դեմ եմ» ժողովրդավարական կուսակցությունը, «Նոր ուժ» ռեֆորմիստական կուսակցությունը, «Հայաստան» կուսակցությունների դաշինքը և «Լուսավոր Հայաստան» կուսակցությունը հրապարակել են իրենց ծրագրերը սեփական համացանցային կայքերում:

Ընտրական շտաբներ

Դիտարկվող ժամանակահատվածում «Ականատես» առաքելության դիտորդների՝ կուսակցությունների շտաբներ այցելությունների և նրանց ներկայացուցիչների հետ հաղորդակցության ընթացքում արձանագրվել են ինչպես համագործակցությանն առնչվող խնդիրներ, այնպես էլ՝ տեղեկատվության տրամադրման մերժման և աշխատանքի ուղղակի խոչընդոտման դեպքեր:

- Մայիսի 18-ին և 22-ին «Քաղաքացիական պայմանագիր» կուսակցության Մամիկոնյանց 15 հասցեում գտնվող գրասենյակ կատարված այցերի ժամանակ, չնայած հինգից ավելի աշխատակիցների ներկայությանը, նրանցից մեկը մյուսների փոխարեն մերժել է պատասխանել հարցերին՝ պատճառաբանելով զբաղվածությամբ: Մայիսի 22-ին Վրացական 16/3 հասցեում գրասենյակի գործավարը նախ լուսանկարել է դիտորդի վկայականը և ուղարկել շտաբի ղեկավարին: Այնուհետ՝ վերջինս, 10 րոպե անց ժամանելուց և հարցերը լսելուց հետո, կտրուկ մերժել է պատասխանել հարցերին: Այս և համանման այլ դրվագներում շտաբների աշխատակիցներն ուղղակիորեն վկայակոչել են վերադասի կողմից իջեցված հստակ հրահանգը՝ չընդունել դիտորդներին և հարցերին չպատասխանել՝ պահանջելով դրանք հասցեագրել կենտրոնական շտաբ կամ անձամբ Արուսյակ Ջուլհակյանին, ով «կորոշի՝ պատասխանել, թե՝ ոչ»: Ընդ որում, պատասխանատուի կոնտակտային տվյալները ճշտելիս աշխատակիցները ցուցաբերել են ընդգծված ոչ համագործակցային վարքագիծ՝ հրաժարվելով տրամադրել հեռախոսահամար և հեգնելով, թե դա իրենց պարտականությունը չէ, իսկ դիտորդն ինքը պետք է ունենա համարը գտնելու «համապատասխան գիտելիք և հմտություն»:
- Մայիսի 20-ին Երևանի Երվանդ Քոչարի 17/2 հասցեում արձանագրվել է «Հայաստան» կուսակցությունների դաշինքի շտաբի տարածք մուտք գործելու ֆիզիկական խոչընդոտման դեպք: Շտաբի պատասխանատուն թույլ չի տվել

դիտորդներին ներս մտնել՝ փակելով դուռը նրանց առջև: Որպես պատճառաբանություն նշվել է, որ որևէ տեղեկատվություն տրամադրել չեն կարող, քանի որ այն «գաղտնի է»:

Արձանագրենք, որ միջազգային չափանիշների համաձայն, այդ թվում՝ ԵԱՀԿ/ԺՀՄԻԳ-ի Տեղական դիտորդների ձեռնարկի համաձայն՝ դիտորդները պետք է ակտիվորեն համագործակցեն քաղաքական կուսակցությունների և թեկնածուների հետ՝ հանդիպելով նրանց, տեղեկություններ հավաքելով քարոզարշավի շրջանակում իրականացվող գործունեության մասին և գնահատելով նախընտրական միջավայրը: Այն շեշտում է, որ դիտորդները պետք է շփվեն հնարավորինս լայն շրջանակի քաղաքական դերակատարների հետ՝ առանց կողմնակալության, ինչպես իշխանական, այնպես էլ ընդդիմադիր ուժերի ներգրավմամբ, և պետք է պատրաստ լինեն լսելու նրանց մտահոգությունները ինչպես նախընտրական, այնպես էլ հետընտրական փուլերում: Այս չափանիշները վերահաստատում են, որ կուսակցությունների գործունեության դիտարկումն ու նրանց հետ շփումը հանդիսանում են ընտրությունների դիտորդության իրականացման կարևոր մեթոդաբանական բաղադրիչ:

Հարկ է նշել, որ Կապանում արձանագրվել են որոշ քաղաքական ուժերի՝ նախընտրական հիմնադրամների հայտարարագրերում չներառված գրասենյակներ: Մասնավորապես՝

- «Քաղաքացիական պայմանագիր» կուսակցության 4 շտաբ՝
    1. Բաղաբերդի 1 հասցեում (փոստի բաժանմունքի հարևանությամբ),
    2. Ձորք թաղամասի 7-րդ շենքի դիմաց (երկհարկանի շինություն),
    3. Շինարարների փողոցում,
    4. Հ. Ավետիսյան 4 հասցեի հարևանությամբ (նախկին «Լիլարի» գեղեցկության սրահի տարածք):

- «Ուժեղ Հայաստան» դաշինքի 4 շտաբ, որոնք հիմնականում փակ են եղել: Դրանք տեղակայված են եղել՝
    1. Ձորք թաղամասի 7-րդ շենքի հարևանությամբ (ավտոտնակ),
    2. Մ. Ստեփանյան փողոցում՝ ՎՏԲ բանկի մասնաճյուղի հարևանությամբ,
    3. Մ. Պապյան փողոցում՝ թիվ 9 ավագ դպրոցի աջակողմյան շենքի առաջին հարկում,
    4. Բաղաբերդի 10-րդ շենքի առաջին հարկում (ըստ ստացված տեղեկությունների՝ այս տարածքը պատկանում է դաշինքի պատգամավորության թեկնածու Արթուր Գասպարյանին):

Քարոզարշավի ընթացքում խախտումներ

Նախընտրական քարոզչության դիտարկված ժամանակահատվածում արձանագրվել են մի շարք խախտումներ տարբեր դերակատարների կողմից:

Քարոզչանյութերի տարածում

«Ականատես» դիտորդական առաքելության դիտորդների կողմից Հայաստանի ողջ տարածքում արձանագրվել են ընտրություններին մասնակցող կուսակցությունների (կուսակցությունների դաշինքների) քարոզչանյութերի տարածման հավասար հնարավորությունների խախտման բազմաթիվ դեպքեր, ներառյալ՝ պաստառների օրենքի պահանջներին չհամապատասխանելը, դրանց տարածումը չթույլատրված վայրերում, գերկենտրոնացումը, առանձնացված վահանակներում հավասար բաշխման առերևույթ խախտումն, ընդ որում՝ թե՛ կուսակցության առանձին քարոզչական պաստառների չափերի և թե՛ մեկ կուսակցությանը պատկանող մի քանի պաստառներ փակցնելու հիմքով:

«Ուժեղ Հայաստան» կուսակցություն

«Ուժեղ Հայաստան» դաշինքի նախընտրական պաստառները փակցված են եղել

- Շիրակի մարզի, Ամասիա գյուղի 24-րդ փողոցում գտնվող բազմաբնակարան շենքի արտաքին պատին,
- Աշոցք համայնքի, Աշոցք գյուղի 1-ին փողոցի կանգառում,
- Արթիկի Ազատության հրապարակում և Անկախության փողոցում տեղադրված անվճար ցուցանակների վրա՝ ակնհայտորեն գերազանցելով հատկացված տարածքը,
- Բերդ քաղաքի Մաշտոցի փողոցում տեղակայված աջակողմյան էլեկտրասյուների վահանակների վրա՝ գերկենտրոնացված,
- Գյումրու Ծառլ Ազնավուր 3 հասցեում գտնվող շենքի արտաքին պատին, Շիրակացու փողոցում տնակի և ծառի վրա,
- Գորիսի Մաշտոց փողոցում բազմաբնակարան շենքի պատին,
- Հաղթանակ-Զորական ճանապարհի էլեկտրասյուների վահանակներին՝ գերկենտրոնացված,
- Մասիսում՝ էլեկտրական տուփի վրա: Նաև այս քաղաքում նկատվել է «Ուժեղ Հայաստան»-ի պաստառների գերկենտրոնացում,
- Սևան համայնքի Ծովագյուղ բնակավայրում՝ չնախատեսված վայրում, կողքին՝ «Մեր ձևով» շարժման պաստառը,
- Սևան-Ճամբարակում փակցված են եղել բազմաբնակարան շենքի վրա,
- Քաջարանում՝ բազմաբնակարան շենքի վրա:

Միաժամանակ, նկատվել է, որ «Ուժեղ Հայաստան» կուսակցության քարոզչանյութերը պարբերաբար պատռվել են Քաջարանում:

«Ուժեղ Հայաստան Կապան» ֆեյսբուքյան էջում հրապարակված տեսանյութից երևում է, որ Կապան քաղաքում՝ սարի գագաթին կանգնեցված երկաթե կոնստրուկցիայով աշտարակի վրա փակցված է լուսադիոդային, դեղին գույնի «3» թիվը, որի մակերեսը գերազանցում է 5 քառակուսի մետրը: Նշյալ «3» թիվը ողջամտորեն կարող է դիտարկվել որպես նախընտրական քարոզչության հետ ասոցացվող նյութ, քանի որ այն համընկնում է «Ուժեղ Հայաստան» դաշինքի՝ ընտրական քվեաթերթիկում և նախընտրական

քարոզչական նյութերում օգտագործվող հերթական համարի հետ: «Ականատես» դիտորդական առաքելությունը 01.06.2026 թվականին դիմում է ներկայացրել ԿԸՀ և թիվ 35 ԸԸՀ՝ պահանջելով «Ուժեղ Հայաստան» դաշինքի նախընտրական քարոզչության հետ ասոցացվող ճանաչել տվյալ նյութը և ձեռնարկել օրենքով նախատեսված միջոցները՝ դրա վերացումն ապահովելու նպատակով: ԿԸՀ-ից հունիսի 5-ին ստացվել է պատասխան, ըստ որի դիմումով ներկայացված տեղեկությունները կուսումնասիրվեն և, ըստ անհրաժեշտության, կհարուցվի վարչական վարույթ:

«Բարգավաճ Հայաստան» կուսակցություն

«Բարգավաճ Հայաստան» կուսակցության նախընտրական պաստառները փակցված են եղել

- Ալավերդի քաղաքի Թումանյան փողոցի կանգառում, Սանահին սարահարթ թաղամասի հրապարակում գտնվող կանգառում,
- Ամասիայում հասարակական շինության պատին,
- Նոյեմբերյան համայնքի Բերդավան գյուղի կանգառներից մեկում,
- Գորիսում՝ «Բարգավաճ Հայաստան» կուսակցության թեկնածու Գուրգեն Հակոբյանի ընտանիքին պատկանող «Maria Design» խանութ սրահի վրա, ինչպես նաև Հայփոստի մուտքի մոտ,
- Մասիսում՝ բազմաբնակարան շենքի վրա:

«Քաղաքացիական պայմանագիր» կուսակցություն

«Քաղաքացիական պայմանագիր» կուսակցության նախընտրական պաստառները փակցված են եղել

- Երևանում «Գումի» շուկայի մոտ կանգառում՝ գերկենտրոնացած, Տիգրան Մեծ պողոտայում էլեկտրական մի քանի տուփի վրա,
- Ամասիա համայնքի Ամասիա գյուղի այգու մուտքի պատին, Ողջի գյուղի համայնքային պատկանելիության պատին,
- Արթիկ-Գյումրի ճանապարհի էլեկտրասյուների աջ և ձախ կողմերի վահանակներին՝ գերկենտրոնացված,
- Արմավիրի մարզում դեպի Մայիսյան գյուղ տանող ճանապարհի կիսաքանդ կամուրջի վրա,
- Բերդ քաղաքի Մաշտոցի փողոցում տեղակայված ձախակողմյան էլեկտրասյուների վահանակներին՝ գերկենտրոնացված,
- Գյումրու 58-րդ թաղամասի բազմաբնակարան շենքի արտաքին պատին, Գարեգին Նժդեհ և Սայաթ-Նովա փողոցներում՝ գերկենտրոնացված,
- Դիլիջանում ողջ քաղաքում՝ մի քանի բացառություններով, երբ գովազդային վահանակներում փակցված էին այլ կուսակցությունների պաստառներ,
- Ջրվեժ համայնքի Զովք գյուղում՝ էլեկտրական ենթակայանի վրա,
- Իջևանի Երևանյան փողոցի էլեկտրասյուների վահանակներին՝ գերկենտրոնացված,

- Հաղթանակ-Պտղավան ճանապարհի էլեկտրասյուների վահանակներին՝ գերկենտրոնացված,
- Հառիճ-Արթիկ ճանապարհի աջակողմյան և ձախակողմյան էլեկտրասյուների վահանակներին՝ գերկենտրոնացված,
- Մարտունիում՝ սուպերմարկետի վրա,
- Ստեփանավան քաղաքի կամրջի երկու կողմում էլեկտրասյուների վրա առկա վահանակներին՝ գերկենտրոնացված, Բաղրամյան փողոցի աջակողմյան էլեկտրասյուների վահանակներին՝ գերկենտրոնացված,
- Սևան քաղաքում՝ չսահմանված վայրում,
- Սևան-Ճամբարակում՝ բազմաբնակարան շենքի վրա:

Մասիս քաղաքում նկատվել է «Քաղաքացիական պայմանագիր» կուսակցության պաստառի վնասման դեպք:

«Ազգային ժողովրդավարական բևեռ» կուսակցություն

«Ազգային ժողովրդավարական բևեռ» կուսակցության նախընտրական պաստառները փակցված են եղել

- Ալավերդի քաղաքի Թումանյան փողոցի կանգառում,
- Քաջարանում՝ առևտրային օբյեկտի վրա:

«Հայաստան» դաշինք

«Հայաստան» կուսակցությունների դաշինքի նախընտրական պաստառները փակցված են եղել

- Ախթալայի Թումանյան փողոցում գտնվող բազմաբնակարան շենքի 2-րդ և 3-րդ հարկերի արտաքին պատին,
- Գյումրու 58-րդ թաղամասի բազմաբնակարան շենքի արտաքին պատին՝ երկու հատ
- Երևանում Սասունցի Դավիթ կայարանի կողքի նորակառույց շենքի պատին:

Բարեգործության արգելք, նյութապես շահագրգռում, ուղղորդում

«Ականատես» առաքելության դիտորդները բնակիչների հետ շփումներում շարունակել են արձանագրել արտերկրից ընտրողների կազմակերպված տեղափոխման և նրանց ուղղորդման վերաբերյալ ահազանգեր: Հայաստանի տարբեր մարզերում և Երևանում բնակվող մի շարք քաղաքացիներ հաստատել են, որ իրենց համայնքում կամ անմիջական շրջապատում ճանաչում են անձանց, որոնք պատրաստվում են ժամանել արտերկրից՝ հատուկ ընտրություններին մասնակցելու նպատակով:

Արձանագրվել է 46 դեպք, երբ հարցվողները հատուկ նշել են Ռուսաստանում գտնվող անձանց ժամանման կազմակերպման և համակարգման հանգամանքը, ինչպես նաև այն, որ նրանցից շատերն արդեն Հայաստանում են, և նրանց կա՛մ բացահայտ ասվել է, կա՛մ

ակնարկվել է, որ ընտրություններում պետք է աջակցեն «Ուժեղ Հայաստան» կուսակցությունների դաշինքին:

Ստորև ներկայացվում են դիտորդների կողմից արձանագրված՝ քաղաքացիների ուղիղ վկայությունները.

- *«Ես ունեմ ծանոթ, ով ասում է, որ անձամբ եկել է Ռուսաստանից Սամվել Կարապետյանին ընտրելու:»*
- *«Խնամիներիս են բերելու Ռուսաստանից:»*
- *«Այո, հարևանիս ծնողները ապրում են Նովոսիբիրսկ քաղաքում, իրենց մոտ ընկած հայկական անձնագրով մարդիկ էին փնտրում, որ ուղարկեն Հայաստան՝ Տաշիրին ընտրելու: Իրենք մերժեցին գալ անգամ գումարի դիմաց, բայց դե մարդիկ են եղել, ովքեր համաձայնվել են:»*
- *«Այո, Կարապետյանի համար են մարդիկ բերում, մեր մոտ:»*
- *«Հարևանը ասում էր, որ իր բարեկամը, որն ապրում է ՌԴ-ում, պատրաստվում է հունիսի 5-ին գալ Հայաստան, մասնակցել ընտրությանը և նորից ամսի 8-ին հետ գնալ: Ոչ միայն ինքը, այլ իրենց աշխատավայրի մեծ մասը:»*
- *«Այո, Ռուսաստանից սամոլյոտներով մարդիկ են ուղարկում Հայաստան ընտրություններին մասնակցելու համար:»*
- *«Գալո՞ւ: Արդեն եկել են, բերել են ու սպասում են ընտրության օրվան:»*
- *«Արդեն եկել են եղբորս ընտանիքը, քրոջս ընտանիքը, դեռ մայիսի վերջին են եկել: Ընդհանուր 6 հոգի եկել են այդ 2 ընտանիքից: Ընտրություններից հետո վերադառնալու են ՌԴ:»*
- *«Բարեկամներ ունեմ, որ ասում են, որ շատ բարձր գներով տոմսեր են իրենց առել, որ գան Հայաստան: Ամենայն հավանականությամբ Սամվելի կողմնակիցներից են:»*
- *«Ռուսաստանից մի խումբ հայեր այս շաբաթ ժամանելու են Տավուշի մարզ ընտրություններին մասնակցելու նպատակով:»*
- *«Գիտեմ, որ եկել են, բայց իրենք չեն խոստովանում, որ հատուկ այդ պայմանով են եկել:»*

Բռնություն

Սոցիալական ցանցերում տարածված տեղեկատվության համաձայն՝ հունիսի 2-ին, Մասիս համայնքի Նոր Կյուրին բնակավայրում «Ուժեղ Հայաստան» կուսակցությունների դաշինքի քարոզարշավի ընթացքում քարոզչություն իրականացնող երեք անձ ենթարկվել

է բռնության՝ Երկրապահ կամավորական միության Մասիսի տարածքային բաժանմունքի նախագահ Արսեն Հարությունյանի և նրա աջակիցների կողմից: Ըստ «Ուժեղ Հայաստան» դաշինքի գրասենյակի՝ *«Մերոնք, ինչպես ամեն օր, քարոզարշավ էին իրականացնում: Այդ ընթացքում նրանց նկատմամբ վիրավորական ժեստեր և անհարգալից վերաբերմունք դրսևորվեց: Երբ մեր տղաներից մեկը նկատողություն արեց և հորդորեց զերծ մնալ նման վարքագծից, քանի որ աղջիկներ կային, իրավիճակը լարվեց: Դրանից հետո Արսեն Հարությունյանը, որը Մասիսի ԵԿՄ տարածքային բաժանմունքի նախագահն է, ֆիզիկական բռնություն կիրառեց և հարձակվեց ներկաների վրա»:*

Դիտորդների իրավունքների խոչընդոտում

Քաջարանի համայնքի ղեկավարը և համայնքապետարանի աշխատակիցները մերժել են համագործակցել դիտորդների հետ: Որևե մեկից հարցազրույց վերցնելու խնդրանքին կամ չթույլատրված վայրերում փակցված պաստառների հեռացման համար դիմումներին դիտորդները ստացել են պատասխան, որ համայնքապետարանը որևէ «կապ և գործ չունի» ընտրությունների հետ և այլևս իրենց այդ թեմայով չդիմել:

Մարտունիում չթույլատրված վայրերում փակցված քարոզչանյութերը հեռացնելու վերաբերյալ դիմումներին համայնքապետարանի ներկայացուցիչները պատասխանել են, որ ոչինչ չեն կարող անել, քանի որ դրանք սեփականատերերն են փակցրել:

Մասնավոր գործատուների կողմից հարկադրանք կամ ուղղորդում

Ստացված տեղեկությունների համաձայն «Ախթալայի լեռնահարստացման կոմբինատ» ընկերության ղեկավարության կողմից աշխատակիցներին հրահանգվել է մասնակցել Ախթալայում մայիսի 20-ին կայացած «Քաղաքացիական պայմանագիր» կուսակցության հանրահավաքին: Հավաքին ներկա է գտնվել կոմբինատի ղեկավար կազմը, սակայն աշխատակիցները աշխատանքային ժամին կայացած հանդիպմանը չեն մասնակցել:

Հունիսի 2-ին Արարատ քաղաքում ԲՀԿ-ի հանրահավաքի ժամանակ դիտորդները հարցուփորձ են արել ներկաներին և պարզվել է, որ նրանց մեջ կան՝ Արարատցեմենտ գործարանի աշխատակիցներ: Մասնակիցները խոստովանել են, որ այդ օրվա հավաքի համար գործարանում նախապես արդեն հայտարարել էին:

Ուսումնական հաստատությունների աշխատողների, ուսանողների և երեխաների ներգրավում

Ընտրություններին մասնակցող քաղաքական ուժերի կողմից շարունակվել է քարոզչության ընթացքում տարբեր ձևաչափերով անչափահասների ներգրավման պրակտիկան:

- Մայիսի 19-ին Գյումրու Թատերական հրապարակում «Հայաստան» կուսակցությունների դաշինքի հանրահավաքին մասնակցել են քարոզչանյութեր կրող անչափահաս տղաներ:

- Մայիսի 23-ին Գյումրիում «Միասնության թևեր» կուսակցության քարոզարշավին ներգրավվել են անչափահասներ, որոնք կրել են դրոշներ, վանկարկել կուսակցական կոչեր և բաժանել բուկլետներ:

- Մայիսի 24-ին Ախուրյան համայնքի Ազատան գյուղի Մշակույթի տան մոտ «Քաղաքացիական պայմանագիր» կուսակցության կողմից հրավիրված հանրահավաքին ներգրավվել են ՀՀ դրոշը ծածանող անչափահասներ:

- Մայիսի 25-ին Գյումրու Վարդանանց հրապարակում «Քաղաքացիական պայմանագիր» կուսակցության կողմից հրավիրված հանրահավաքի ընթացքում ներգրավվել են անչափահաս երեխաներ, որոնք կրել են կուսակցության դրոշը կամ ձեռքերին պահել են քարոզչական փուչիկներ:

- Մայիսի 29-ին Աբովյան քաղաքում «Ուժեղ Հայաստան» կուսակցությունների դաշինքի հանրահավաքի ժամանակ մեծ թվով անչափահասներ կրել են քաղաքական ուժի լոգոյով վերնաշապիկներ, գլխարկներ, բաժանել են բուկլետներ, վանկարկել են նախընտրական կոչեր:

- Մայիսի 29-ին Բերդ քաղաքի ավոտակայանի մոտ «Քաղաքացիական պայմանագիր» կուսակցության կողմից հրավիրված հանրահավաքի ընթացքում ներգրավվել են անչափահասներ, որոնք տարազով դիմավորել են Նիկոլ Փաշինյանին, կրել կուսակցական պաստառներ և փուչիկներ:

- Մայիսի 30-ին Ստեփանավանում «Բարգավաճ Հայաստան» կուսակցության քարոզարշավին մասնակցել է մոտ 40 անչափահաս, որոնք վանկարկել են կուսակցության առաջնորդ Գագիկ Ծառուկյանի անունը, թափահարել դրոշակներ և պաստառներ: Միջոցառմանը ներկա են եղել նաև «Patriots» մարտական ակումբի սաները:

- Նոյեմբերյան քաղաքի հիմնական և ավագ դպրոցների ուսուցիչները հորդորել են աշակերտների ծնողներին պարտադիր մասնակցել «Քաղաքացիական պայմանագիր» կուսակցության մայիսի 30-ին նախատեսված քարոզչական հավաքին՝ հատուկ շեշտելով, որ իրենց մասնակցության անհնարինության դեպքում «գոնե երեխաներին ուղարկեն» հավաքին:

- Մայիսի 31-ին Ալավերդի քաղաքի Բաղրամյան թաղամասում «Ուժեղ Հայաստան» կուսակցությունների դաշինքի կազմակերպած շրջայցի ընթացքում ներգրավվել են անչափահասներ, որոնք վանկարկել են «Սամվե՛լ-վարչապե՛տ» և կրել կուսակցական դրոշներ:

- Հունիսի 2-ին Մասիսում «Բարգավաճ Հայաստան» կուսակցության կողմից նախընտրական միջոցառմանը ներգրավվել են անչափահասներ, որոնք բաժանել են կուսակցության քարոզչական բուկլետները:

- Հունիսի 2-ին «Քաղաքացիական պայմանագիր» կուսակցության ներկայացուցիչները Գորիս համայնքի Վերիշեն գյուղից տեսանյութ են հրապարակել, որտեղ երեխաները, քարտեզները փակցրած հագուստին և կուսակցության բուկլետները ձեռքերին, խոսում են խաղաղության մասին:

- Հունիսի 3-ին Գորիսում «Բարգավաճ Հայաստան» կուսակցության քարոզարշավին ներգրավվել են երեխաներ:

- Հունիսի 3-ին Երևանում «Ուժեղ Հայաստան» կուսակցությունների դաշինքի հանրահավաքի և դրան հաջորդած երթի ընթացքում զանգվածային կերպով ներգրավվել են 13-14 տարեկան դեռահասներ: Նրանք իրականացրել են կազմակերպական/համակարգման աշխատանքներ. երթի սկզբում բաժանել են շապիկներ և դրոշներ, կրել են բարձրախոսներ, որոնցով պարբերաբար հնչեցրել են քաղաքական ուժի կարգախոսները («Սամվե՛լ-վարչապե՛տ», «Ամո՛թ, Նիկո՛լ»), ինչպես նաև թմբուկներով ապահովել են երթի աղմկային ֆոնը: Բացի այդ, արձանագրվել են դեպքեր, երբ դեռահասները հեռախոսազանգերի միջոցով որպես մասնակից հավաքագրել և երթին են միացրել իրենց հասակակից ծանոթներին:

- Արմավիր համայնքում անչափահաս դպրոցականներին առաջարկվել է «Ուժեղ Հայաստան»-ի կողմից քարոզչական բուկլետների բաժանում, օրական 15,000 ՀՀ դրամ վարձատրության դիմաց, առանց կամավորության պայմանագրի և կանխիկ վճարմամբ:

Եկեղեցու կողմից ուղղորդում

Նախընտրական շրջանում «Ականատես» դիտորդական առաքելությունն արձանագրել է մի քանի դեպք, որոնք վկայում են ընտրական գործընթացների համատեքստում Հայաստանյայց առաքելական սուրբ եկեղեցու հոգևոր դասի կողմից քաղաքական կոնկրետ գործիչների և թեկնածուների հետ հրապարակային համերաշխություն ցուցաբերելու մասին:

Մասնավորապես, մայիսի 10-ին՝ քարոզչական ակտիվ փուլի մեկնարկին համընթաց, Ն.Ս.Օ.Տ.Տ. Գարեգին Բ Ամենայն Հայոց Կաթողիկոսը պաշտոնական այց է կատարել «Ուժեղ Հայաստան» դաշինքի առաջնորդ Սամվել Կարապետյանին՝ վերջինիս տնային կալանքի վայրում: Եկեղեցու պաշտոնական հաղորդագրության մեջ Ս. Կարապետյանը բնութագրվել է որպես «հայրենասեր ու եկեղեցասեր», իսկ նրա նկատմամբ կիրառված իրավական սահմանափակումները որակվել են որպես «փորձություններ»:

Արարատի մարզի Արարատ քաղաքում Արարատի Սբ. Ամենափրկիչ եկեղեցում մայիսի 31-ին տեղի ունեցած կիրակնօրյա սուրբ պատարագի ավարտական հատվածում հոգևորականի կողմից հնչեցվել են ուղղորդող հայտարարություններ: Մասնավորապես, դիմելով հավատացյալներին՝ նշվել է, որ հաջորդ կիրակին (ընտրությունների օրը)

բախտորոշ և կարևոր եկեղեցու համար, և պետք է *«ճիշտ որոշում կայացնել, որպեսզի եկեղեցի ունենանք, որտեղ կկարողանանք աղոթել»*:

Վարչական ռեսուրսի օգտագործում

Մարդկային ռեսուրսների օգտագործում

Հանրային հատվածում արձանագրվել են մարդկային ռեսուրսների առերևույթ ոչ իրավաչափ օգտագործման մի շարք դեպքեր, որոնց մեծ մասը վերաբերել է «Քաղաքացիական պայմանագիր» կուսակցության օգտին վարվող քարոզչությանը:

- Չնայած այն հանգամանքին, որ Շիրակի մարզպետ Դավիթ Առուշանյանին տրամադրվել էր 2025-2026 թթ. աշխատանքային տարվա ամենամյա արձակուրդի մի մասը՝ 14 աշխատանքային օր տևողությամբ՝ 2026 թ. մայիսի 8-27-ը ներառյալ, ինչպես նաև 8 օր տևողությամբ չվճարվող արձակուրդ՝ 2026 թ. մայիսի 29-ից մինչև հունիսի 5-ը ներառյալ, նշված ժամանակահատվածում, ի պաշտոնե հանդես գալով, մարզպետը հանդիպում է ունեցել, որի վերաբերյալ հրապարակում է իրականացվել մարզպետարանի աշխատակազմի ֆեյսբուքյան պաշտոնական էջում: Մասնավորապես՝ մայիսի 21-ին Դավիթ Առուշանյանը Արթուր Ալեքսանյանի անվան մարզահամալիրի շինարարական աշխատանքների ընթացքում հանդիպել է ԿԳՄՍ նախարարի հետ:

- Մայիսի 23-ին ժամը 20:00-ին Արտաշատ քաղաքում կուսակցության մեծ հավաքին ներկա են գտնվել մի շարք վարչական բնակավայրերի և համայնքապատկան կենտրոնների, դպրոցների աշխատակիցներ, այդ թվում՝ Արտաշատի համայնքապետարանի և Մխչյան բնակավայրի վարչական աշխատակազմերի անդամներ, Մրգավետի դպրոցի տնօրենը և ուսուցիչները, Դիմիտրովի միջնակարգ դպրոցի տնօրենը և ուսուցիչները՝ Նարեկ բնակավայրից:

- Մայիսի 23-ին Վեդի համայնքի Սուրենավան բնակավայրում իրականացվող կուսակցության քարոզարշավին ներկա է գտնվել տվյալ բնակավայրի վարչական ղեկավար Անի Վարդազարյանը: Վերջինս արձակուրդ չի վերցրել, սակայն պարբերաբար «Քաղաքացիական պայմանագիր» կուսակցության քարոզարշավին է մասնակցել համայնքի այլ բնակավայրերում՝ աշխատանքային ժամերին:

- Մայիսի 25-ին Վարդենիկ գյուղում տեղի է ունեցել Գեղարքունիքի մարզպետ Կարեն Սարգսյանի գլխավորած «Քաղաքացիական պայմանագիր» կուսակցության քարոզարշավը Մշակույթի տան բակում: Մինչ մարզպետի մոտենալը՝ Մշակույթի տան սաներն արդեն պատրաստ կանգնած էին իրենց պարի դասատուների հետ: Այնուհետ, երեխաները սկսել են պարել և իրենց հետ պարելու են հրավիրել «Քաղաքացիական պայմանագիր» կուսակցության թեկնածու և գործող պատգամավոր Ալխաս Ղազարյանին, որը միացել է և պարել երեխաների հետ: «Վարդենիկի մշակույթի կենտրոն» ՀՈԱԿ-ի տնօրեն Արտուշ Խաչատրյանը ոչ միայն մասնակցել է Գեղարքունիքի մարզի Վարդենիկ համայնքում

«Քաղաքացիական պայմանագիր» կուսակցության նախընտրական քարոզչական միջոցառմանը, այլև կազմակերպել և իրականացրել է այն՝ գործընթացում ներգրավելով կենտրոնի սաներին: Ըստ ստացված տվյալների՝ նա երեխաներին տվել է ցուցումներ քաղաքական միջոցառումը կազմակերպված կերպով անցկացնելու նպատակով:

Քանի որ ՀՀ ընտրական օրենսգրքով ուսումնական հաստատությունների աշխատողներին արգելվում է նախընտրական քարոզչության կազմակերպումն ու իրականացումը իրենց լիազորություններն իրականացնելիս կամ ի պաշտոնե հանդես գալիս, «Ականատես» դիտորդական առաքելությունը դիմում է ներկայացրել ԿԸՀ և թիվ 21 ԸԸՀ՝ Արտուշ Խաչատրյանի նկատմամբ Վարչական իրավախախտումների վերաբերյալ ՀՀ օրենսգրքի 40.8 հոդվածով նախատեսված զանցանքի հատկանիշների հիմքով վարչական իրավախախտում կատարելու մասին արձանագրություն կազմելու և վարչական դատարան հայց ներկայացնելու պահանջով:

- Առաքելության ստացած և ստուգված տվյալներով՝ ՀՀ ՆԳՆ փրկարար ծառայության աշխատակիցներին Նոյեմբերյան համայնքում հրահանգել են պարտադիր մասնակցել «Քաղաքացիական պայմանագիր» կուսակցության՝ մայիսի 30-ին Նոյեմբերյանում և Իջևանում կայանալիք քարոզչական միջոցառմանը:

- Մայիսի 31-ին Արագածոտնի մարզի Աշտարակ համայնքի Բյուրական բնակավայրում «Քաղաքացիական պայմանագիր» կուսակցության նախընտրական քարոզարշավի շրջանակներում Հովհաննես Թումանյանի անվան միջնակարգ դպրոցի տնօրենի պաշտոնակատար Վարսենիկ Վարդանյանը և նույն դպրոցի ուսուցչուհի Աննա Կարապետյանը, օգտագործելով իրենց պաշտոնեական դիրքը և գործելով ի պաշտոնե, իրականացրել են քարոզչություն ու փաստացի նպաստել քարոզչական միջոցառման կազմակերպմանը: Ըստ ստացված տվյալների՝ Վ.Վարդանյանը, մարզպետի և նրա թիմակիցների հետ հանդիպելու պատրվակով, քարոզչական միջոցառմանն է հրավիրել դպրոցի ուսուցիչներին, իսկ Ա.Կարապետյանը, հանդես գալով որպես ուսուցիչ և դասղեկ, նույն միջոցառմանն է հրավիրել իր աշակերտներին, ինչը հաստատվել է նաև ՁԼՄ-ներին տրված նրանց հարցազրույցներով և հրապարակված ձայնագրությունով: Նշված գործողությունները ևս համապատասխանում են Վարչական իրավախախտումների վերաբերյալ ՀՀ օրենսգրքի 40.8-րդ հոդվածով նախատեսված զանցանքի հատկանիշներին, ուստի «Ականատես» դիտորդական առաքելությունը հայցադիմումներ է ներկայացրել ՀՀ վարչական դատարան՝ նշված անձանց վարչական պատասխանատվության ենթարկելու պահանջով:

- Հունիսի 3-ին «Քաղաքացիական պայմանագիր» կուսակցությունը քարոզարշավ է իրականացրել Գեղարքունիքի մարզի մի շարք բնակավայրերում: Մասնավորապես՝ Մարտունի և Վարդենիս քաղաքներում, Գետաշեն և Ծակքար

բնակավայրերում դիտորդների կողմից արձանագրվել է մանկապարտեզի, հիվանդանոցի, ամբուլատորիայի, դպրոցի, երաժշտական դպրոցի, ծննդատան և համայնքապետարանի աշխատակիցների կոլեկտիվ ներկայություն:

- Հունիսի 5-ին Լոռու մարզում (Սպիտակ, Ստեփանավան, Տաշիր) արձանագրվել են դեպքեր, երբ դպրոցների տնօրեններին և համայնքապետարանների աշխատակիցներին հրահանգվել է ապահովել ենթակա աշխատակազմի կազմակերպված տեղափոխումը Երևան և մասնակցությունը «Քաղաքացիական պայմանագիր» կուսակցության ամփոփիչ հանրահավաքին: Ըստ ստացված տեղեկությունների՝ որոշ դեպքերում մասնակցությունը հրամայական է եղել, իսկ այլ դեպքերում՝ կիրառվել է «համերգի գնալու» պատրվակը՝ հանրային քննադատությունից խուսափելու համար: Մասնավորապես, Ստեփանավանում աշխատանքային ժամին, համայնքապետարանի և ՀՈԱԿ-ների աշխատակիցներին «սպրինտեր» տիպի միկրոավտոբուսներով և անհատական մեքենաներով տեղափոխել են հանրահավաքի:

Բացի վերոնշյալը, Սյունիքից պարբերաբար ստացվել են ահազանգեր, որ Կապան համայնքի բնակավայրերի վարչական ղեկավարները զանգահարում են իրենց բնակիչներին, խնդրում ու հորդորում են ընտրություններում քվեարկել «Միասնության թևեր» կուսակցության (#6 քվեաթերթիկ) օգտին: Կապանում, ըստ դիտորդների պարզած աղբյուրների մայիսի 31-ին «Միասնության թևեր» կուսակցության քարոզարշավի բակային հանդիպումների ժամանակ մի շարք համատիրություններից բնակիչներին տեղեկացրել են, որ հանդիպում է լինելու համայնքապետարանից պատասխանատու անձանց մասնակցությամբ: Բնակիչները գնացել են և տեսել, որ քարոզարշավ է ընթանում Արման Թաթոյանի մասնակցությամբ:

Նյութական և ֆինանսական ռեսուրսների օգտագործում

Ընտրությունների նախաշեմին առանձին համայնքներում առերևույթ ոչ իրավաչափ են օգտագործվել համայնքային ռեսուրսները:

- Մայիսի 16-ին ասֆալտապատվել է Ախթալայի նորակառույց կամուրջներից մեկը, որը երկար ժամանակ փակ է եղել երթևեկության համար, և, փաստորեն, կարգի է բերվել «Քաղաքացիական պայմանագիր» կուսակցության՝ մայիսի 20-ին քաղաքի կենտրոնական հրապարակում կազմակերպվող միջոցառման համար:

- Մայիսի 21-ին արձանագրվել է, որ Քաղաքաշինության, տեխնիկական և հրդեհային անվտանգության տեսչական մարմնի Լոռու տարածքային բաժնի պետ Գոռ Ասրյանը, գտնվելով արձակուրդում, իր ծառայողական մեքենայով այցելել է «Քաղաքացիական պայմանագիր» կուսակցության գրասենյակ: Ըստ ահազանգի՝ նա նույն ծառայողական մեքենան օգտագործել է նաև նախընտրական քարոզչությանը մասնակցելու նպատակով տեղաշարժվելիս:

- Մայիսի 29-ին Լոռու մարզպետ Արեն Մկրտչյանը հայտնել է, որ համայնքային բյուջեի միջոցներով ձեռք են բերվել 6 երթուղային մեքենաներ, որոնք սպասարկելու են Սպիտակ համայնքի գյուղական 20 բնակավայրերի, իսկ Սպիտակ քաղաքի ներսում գործելու են անվճար: Պետք է նշել, որ մինչ այդ, Սպիտակում ավելի քան 5 տարի միջքաղաքային տրանսպորտի խնդրի վերաբերյալ քաղաքացիների և հասարակական կազմակերպությունների դիմումները համայնքապետարանին մնում էին անարձագանք, և միայն ընտրությունների նախաշեմին հանրայնացվեց տրանսպորտային միջոց ձեռք բերելու տեղեկությունը:

Ճնշումներ, հարկադրանք և քվեարկության վերահսկման փորձեր

Ստացված տեղեկություններով՝ Սիսիանի համայնքապետարանի ենթակայության տակ գտնվող կոմունալ բաժնի աշխատակիցներին նախազգուշացվել է ընտրություններում քվեարկել իշխող «Քաղաքացիական պայմանագիր» կուսակցության օգտին՝ հակառակ դեպքում սպառնալով աշխատանքային խնդիրների առաջացմամբ: Նաև, ամենայն հավանականությամբ, քվեարկության գործընթացը և աշխատակիցների ընտրությունը վերահսկելի դարձնելու նպատակով կիրառվել է ընտրողների գրանցման վայրի (ընտրատեղամասի) կազմակերպված փոփոխության մեխանիզմ: Մասնավորապես, «Սիսիանի բնակարանային կոմունալ տնտեսություն» ՀՈԱԿ-ի պետ Դ. Մարգարյանի նախաձեռնությամբ՝ բաժնի շուրջ 40 աշխատակցի ընտրատեղամասը Սիսիան քաղաքից տեղափոխվել է համայնքի Լոր բնակավայրի միջնակարգ դպրոցում տեղակայված թիվ 34/41 ընտրատեղամաս, որտեղ ՏԸՀ նախագահը հենց ինքը՝ Դավիթ Մարգարյանն է՝ նշանակված «Քաղաքացիական պայմանագիր» կուսակցության կողմից: Միաժամանակ, Դ. Մարգարյանը հանդիսանում է վերադաս մարմնի՝ թիվ 34 ԸԸՀ նախագահ Արմինե Անդրանիկյանի ամուսինը:

Թիվ 34/41 ՏԸՀ ընտրողների ցուցակի ուսումնասիրությամբ պարզվել է, որ մինչև մայիսի 26-ը տեղամասում գրանցված է եղել 240 ընտրող, մինչդեռ մայիսի 27-ի դրությամբ ընտրողների թիվն աճել է՝ հասնելով 281-ի: Արձանագրվել է, որ նոր հաշվառված 41 քաղաքացիներից 35-ը հանդիսանում են Սիսիանի կոմունալ տնտեսության աշխատակիցներ՝ ներառյալ բանվորներ, հավաքարարներ, հաշվապահներ, գնումների մասնագետներ և կադրերի բաժնի աշխատակիցներ: Նույն տեղամասում են հաշվառվել նաև Դավիթ Մարգարյանի ծնողները:

Այս տեղեկությունը միաժամանակ հրապարակվել է նաև լրատվամիջոցի կողմից: Ըստ ներկայացված լուրի՝ աշխատակիցներին ընտրատեղամասի տեղափոխման գործընթացը ներկայացվել է որպես «էքսկուրսիա», որի ընթացքում էլ նրանք պետք է կատարեն իրենց քվեարկությունը: Նման գործելակերպը կարող է դիտարկվել որպես աշխատանքային լծակների կիրառմամբ քվեարկության արդյունքների վերահսկման (ուղղորդման) փորձ: Հատկանշական է, որ լրատվամիջոցի կողմից փաստերի ստուգման և լրագրողական հարցման ընթացքում պաշտոնյան հանդես է եկել հակասական պնդումներով՝ նախ

հաստատելով, ապա հերքելով տվյալ ՏԸՀ-ում որպես նախագահ ներգրավված լինելու՝ ԿԸՀ կողմից փաստագրված հանգամանքը:

Կուսակցությունների ֆինանսավորում

Ֆինանսական մուտքեր և ծախսեր

ՀՀ ընտրական օրենսգրքի 26-րդ հոդվածի 3-րդ մասի համաձայն՝ «Ընտրություններին մասնակցող կուսակցության (կուսակցությունների դաշինքի) նախընտրական հիմնադրամը ձևավորվում է այդ կուսակցության (դաշինքի անդամ կուսակցությունների) կատարած մուծումներից»: Նախընտրական քարոզչության ժամանակահատվածի քարոզարշավի երկրորդ տասնօրյակի ավարտին՝ 2026 թ. մայիսի 8-ից մինչև 27-ն ընկած ժամանակահատվածում, դիտարկումների արդյունքները ամփոփվում են ստորև:

- Մայիսի 27-ի դրությամբ ընտրությունների մասնակից 18 քաղաքական ուժերի նախընտրական հիմնադրամներին եղել է 1,239,823,520 ՀՀ դրամի մուտք: 100 միլիոն ՀՀ դրամից ավելի մուտքեր ունեցել են «Քաղաքացիական պայմանագիր» կուսակցությունը (530,540,000 ՀՀ դրամ կամ բոլոր մուտքերի 42.8%-ը), «Ուժեղ Հայաստան» կուսակցությունը (330 միլիոն ՀՀ դրամ՝ բոլոր մուտքերի 26,6%-ը), «Հայաստան» կուսակցությունների դաշինքը (124,3 միլիոն ՀՀ դրամ՝ բոլոր մուտքերի 10%-ը) և «Բարգավաճ Հայաստան» կուսակցությունը (100,5 միլիոն ՀՀ դրամ՝ բոլոր մուտքերի 8.1%-ը): Տվյալ օրվա դրությամբ միայն «Քոչարի ազգային վերածնունդ և ազգի զարթոնք» կուսակցության նախընտրական հիմնադրամում մուտքեր չեն եղել: Մինչև ինքնաբացարկ հայտնելը մուտքեր չեն եղել նաև «Ալյանս» առաջադիմական ցենտրիստական կուսակցության նախընտրական հիմնադրամում: «Դեմոկրատիա օրենք կարգապահություն», Ռեֆորմիստական և Քրիստոնեա-ժողովրդավարական կուսակցությունների մուտքերը չեն գերազանցել 1 միլիոն դրամը (համապատասխանաբար, 553,120, 502,100 և 110,000 ՀՀ դրամ):

- Մայիսի 27-ի դրությամբ կուսակցությունների բանկային հաշիվներին կատարվել է 1,609,578,652 ՀՀ դրամի նվիրատվություն 1,481 անձանց կողմից, միջինը՝ մոտ 1,086,819 ՀՀ դրամ մեկ նվիրատու անձի կողմից:[1] Առաջատարը «Ուժեղ Հայաստան» դաշինքն է (611,109,000ՀՀ դրամ): Նրան հաջորդում են «Քաղաքացիական պայմանագիր» կուսակցությունը (393,941,053 ՀՀ դրամ), «Հայաստան» դաշինքը (262,278,000 ՀՀ դրամ) և «Բարգավաճ Հայաստան» կուսակցությունը (112,650,000 ՀՀ դրամ): Այսպիսով, առավել շատ նվիրատվություն ստացած չորս քաղաքական ուժերը միասին ստացել են 1,379,978,053 ՀՀ դրամ կամ նվիրատվությունների ողջ ծավալի ավելի քան 85.7%-ը:

[1] Քանի որ բանկերի կողմից ԿԿՀ ներկայացված տեղեկանքներում նվիրատու անձանց ինքնությունը չի բացահայտված, հնարավոր է, որ որոշ անձինք նվիրատվություն կատարած լինեն մեկից ավել անգամ:

- Համաձայն Քրիստոնեա-ժողովրդավարական կուսակցության երկրորդ հայտարարագրի՝ կուսակցության նախընտրական հիմնադրամ եղել է 110,000 ՀՀ դրամի մուտք՝ մայիսի 18-ին: Միևնույն ժամանակ, համապատասխան բանկի կողմից ԿԿՀ ներկայացված տեղեկանքում առկա չէ նշված կուսակցության բանկային հաշվից ելք՝ ուղղված նրա նախընտրական հիմնադրամին:[2]

Հունիսի 3-ին ԿԸՀ կայքում հրապարակված՝ կուսակցությունների և կուսակցությունների դաշինքների նախընտրական հիմնադրամներում եղած միջոցների օգտագործման վերաբերյալ հայտարարագրերի ստուգման արդյունքների վերաբերյալ ՎՎԾ եզրակացության համաձայն՝ *«Բոլոր սուբյեկտների կողմից ներկայացված նախընտրական հիմնադրամներում եղած միջոցների օգտագործման վերաբերյալ հայտարարագրերում խախտումներ չեն հայտնաբերվել և դրանք համապատասխանում են Հայաստանի Հանրապետության ընտրական օրենսգրքով սահմանված կանոնակարգումներին»*: Այսինքն, ՎՎԾ-ն անտեսել է Քրիստոնեա-ժողովրդավարական կուսակցության նախընտրական հիմնադրամին առնչվող վերը նշված խնդիրը:

Թափանցիկության ու հաշվետվողականության խնդիրներ

«Infocom» լրատվամիջոցի «CTRL Z» հաղորդման շրջանակներում վեր են հանվել Քրիստոնեա-ժողովրդավարական կուսակցության տարեկան հաշվետվությունների և դրանցում հրապարակված տվյալների հավաստիության (գրասենյակի վարձավճար վճարելու, սակայն չհայտարարագրելու), ինչպես նաև Ազգային ժողովրդական բևեռ կուսակցության հրապարակած տարեկան հաշվետվությունների հավաստիության և կուսակցության կողմից ստացված նվիրատվությունների մասով՝ օրենսդրական պահանջներին հնարավոր անհամապատասխանության վերաբերյալ տվյալներ, որոնք փոխանցվել են Կոռուպցիայի կանխարգելման հանձնաժողով ուսումնասիրման նպատակով:

[2] Քրիստոնեա-ժողովրդավարական կուսակցության բանկային հաշվից միակ ելքը եղել է մայիսի 15-19 ժամանակահատվածի տեղեկանքում (220,200 ՀՀ դրամ), ընդ որում առանց նշելու փոխանցման ամսաթիվը: Հատկանշական է, որ այդ գումարից 110,000 ՀՀ դրամը նշվել է որպես «բուկլետների պատվերի դիմաց» փոխանցում: Այդ գումարի չափը համընկնում է այն գումարի չափին, որը կուսակցության նախընտրական հիմնադրամի երկրորդ հայտարագրում նշված է որպես մուտք, որը մայիսի 26-ին ծախսվել է թռուցիկների տպագրության վրա: